ՔԱՂԱՔ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ
ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ԱՅԳԻՆԵՐԻ ԲԱԺԻՆ

PARK PROUD LA

Լոս Անջելեսի Քաղաքային Այգիներում Սննդի և Առևտրային Իրերի Վաճառքի Կանոններն ու Կարգերը

Հանգստի և Այգիների Բաժինը (RAP) կառավարում է ավելի քան 450 հասարակական այգիներ և 170 հանգստի կենտրոններ, գոլֆի տարածքներ, արահետներ, թանգարաններ և տեղանքներ: Այդ տեղանքները ներառում են նաև հանգստի տարածքներ, խաղահրապարակներ, համայնքային պարտեզներ, ավտոկայանատեղիներ, դաշտեր, լողավազաններ և այլ կառույցներ:

RAP-ի գլխավոր առաքելությունն է իր այգիները, բաց տարածքները և տեղանքները դարձնել անվտանգ, լավ ծրագրավորված և հասանելի վայրեր, որտեղ բոլորը կկարողանան վայելել և հանգստանալ: Չնայած որ իրերի վաճառքը Լոս Անջելեսի այգիներում թույլատրված է, կանոններին ու կարգերին խիստ են վերաբերվում, որպեսզի ապահովել սանիտարական, անվտանգ և մաքուր պայմաններ: Այդ կանոնակարգերը ներկայացված են ստորև:

Որտե՞ղ ես կարող եմ իրականացնել վաճառք քաղաքային այգում:

Լոս Անջելեսի RAP-ի շրջանակներում ոչ բոլոր այգիներն են թույլատրում վաճառք: Եթե այգին չի արգելում վաճառք, վաճառողները կարող են իրականացնել վաճառք այգում ցանկացած սալահատակով արահետում կամ հատուկ նախատեսված քայլելու հատվածներում:

Որտե՞ղ ես չպետք է իրականացնեմ վաճառք քաղաքային այգում:

Ցանկացած պարագայում, վաճառողները չեն կարող իրականացնել վաճառք հետևյալ վայրերում.

- Սպասարկման կամ պահեստավորման հատվածներում
- Ավտոկայանատեղիներում կամ հատուկ նախատեսված կայանման վայրերում
- Ցեխապատ հատվածներում, արահետներում, խոտածածկ տարածքներում
- Ցանկացած շենքից, հանգստի կենտրոնից, բաղնիքից, շինությունից կամ խաղահրապարակից մինչև 100 ֆուտ հեռավորության վրա
- Ցանկացած դպրոցից, ճամբարից, երիտասարդական գործունեության կենտրոնից կամ ավագ կենտրոնից մինչև 500 ֆուտ հեռավորության վրա
- Հունական թատրոնում համերգների կամ միջոցառումների երեկոներին մինչև 2500 ֆուտ հեռավորության վրա
- Գրիֆֆիթի Աստղադիտարանից կամ Գրիֆֆիթի Աստղադիտարանի ավտոկայանատեղիից մինչև 2500 ֆուտ հեռավորության վրա

Լոս Անջելեսի քաղաքային այգիներում սննդի և առևտրային իրերի վաճառքի կանոնների և կարգերի ամբողջական ցանկին ծանոթանալու համար խնդրում ենք այցելել հետևյալ կայքը www.laparks.org/vending.

ՔԱՂԱՔ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ
ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ԱՅԳԻՆԵՐԻ ԲԱԺԻՆ

PARK PROUD LA

Լոս Անջելեսի Քաղաքային Այգիներում Սննդի և Առևտրային Իրերի Վաճառքի Կանոններն ու Կարգերը

- Ելիսյան այգում ցանկացած տեղ Դոջեր մարզադաշտում բոլոր միջոցառումները սկսելուց երեք ժամ առաջվանից մինչև միջոցառման ավարտից երեք ժամ անց, ներառյալ բեյսբոլի խաղեր, համերգներ, մրցումներ
- Այգու նստարաններից կամ այգու այլ կահավորանքից հինգ մինչև (5) ֆուտ հեռավորության վրա, և հետիոտնային անցումից մինչև 10 ֆուտ հեռավորության վրա
- Ցանկացած շատրվանից, արձանից կամ մշակույթային արժեքից մինչև 25 ֆուտ հեռավորության վրա
- Ցանկացած այգում, որը փոխանցվել, տրվել կամ շնորհվել է Լոս Անջելեսին արդեն առևտրային գործունեության սահմանափակմամբ

Ե՞րբ և ինչպե՞ս ես կարող եմ իրականացնել վաճառք քաղաքային այգում:

Մեր այգիներն ունեն կանոնավոր աշխատանքային ժամեր, որոնք երբեմն կարող են փոփոխվել այգուց այգի՝ կախված ծրագրավորումից, որն այնտեղ առկա է, կամ մեր հանգստի կենտրոններում որևէ հատուկ ծրագրավորումից:

- Վաճառակետերը պետք է փակվեն այգու փակվելուց 30 րոպե առաջ
- Վաճառք չի թույլատրվում, երբ այգին փակ է

Կան նաև շատ հատուկ միջոցառումներ, որոնց RAP-ը մասնակցում է կամ հյուրընկալում: Վաճառքն արգելվում է այգիներում նկարահանման, փառատոնի, համերգի, ֆիլմի ցուցադրության երեկոյի, հատուկ միջոցառման, կառնավալի, շքերթի, վազքի միջոցառման կամ Բաժնի կողմից հաստատված այլ ժամանակավորապես թույլատրելի միջոցառումների ժամանակ:

Տեղակայվածություն և Այլ Պահանջներ

Մենք ուզում ենք մեր այգիները պահպանել անվտանգ և մաքուր մեր հաճախորդների համար և ապահովել, որ վաճառքի իրականացումը չխանգարի մեր հաճախորդների զվարճանքին, ովքեր գալիս են մեր այգիներ ակտիվ կամ պասիվ հանգստի: Վաճառողների քանակը յուրաքանչյուր այգում սահմանափակվում է երկու վաճառողով յուրաքանչյուր ակրի վրա և վաճառողների միջև հեռավորությունը պետք է լինի 25 ֆուտ:

Այգում վաճառքը պետք է իրականացվի առաջինը եկավ, առաջինը սպասարկվեց սկզբունքով, և վաճառողները պետք է վարեն ճշգրիտ մատյան իրենց մուտքի և մեկնելու ժամանակների վերաբերյալ:

ՔԱՂԱՔ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ
ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ԱՅԳԻՆԵՐԻ ԲԱԺԻՆ

PARK PROUD LA

Լոս Անջելեսի Քաղաքային Այգիներում Սննդի և Առևտրային Իրերի Վաճառքի Կանոններն ու Կարգերը

Ստորև նշված են այլ պահանջներ վաճառողների համար.

- Պետք է համապատասխանեն Լոս Անջելեսի վարչաշրջանի առողջապահության Բաժնին:
- Պատասխանատու են թափոնների, սննդի մնացորդների, փաթեթավորումների, աղբի կամ նյութերի մաքրման և հեռացման համար, որոնք առաջացել են նրանց առևտրի հետևանքով կամ կապված են դրա հետ:
- Նրանց արգելված է տեղադրել որևէ հեղուկ կամ պինդ թափոն այգու աղբամաններում, ներառյալ սառույցի նետում այգու ունեցվածքի վրա:
- Պետք է բերեն մանրէներից պաշտպանված աղբամաններ:
- Նրանց անգելված է միացնել կամ օգտագործել ջրի, էլեկտրաէներգիայի կամ գազի ցանկացած վարդակ, իրենց սննդի կամ ապրանքի վաճառքի նպատակով:
- Չեն կարող վաճառել հակասանիտարական կամ անապահով, վտանգավոր կամ վնասակար սնունդ, խմիչք կամ ապրանք: Ներառյալ նետաձգության սարքավորումներ, դանակներ, ճեղապարսատիկներ կամ ցանկացած առարկա, որը համարվում է զենք, ինչպիսիք են հրազենային զենքերը, խաղալիք զենքերը կամ խաղալիք դանակներ:
- Պետք է ունենան և ցուցադրեն բոլոր թույլտվությունները տեսանելի վայրում:
- Ըստ այս կանոնների չի թույլատրում անձնական ծառայությունների վաճառք, ներառյալ, բայց չսահմանափակվելով, կրթական ճամբարներ, մերսման ծառայություններ, յոգա, շների մարզում, կենդանի քշել, ընտանի կենդանիների գազանանոցներ, կամ սպորտ/ֆիթնես դասընթացներ:
- Ոչ մի վաճառքի միջոց, տաղավար կամ սայլակ չպետք է դիպչի, հենվի, կամ ամրացվի լամպի սյան, կայանատեղիի հաշվիչի, փոստարկղի, երթևեկության նշանի, պիկնիկի սեղանի, հրշեջ ծորակի, ծառի, բույսի, ծաղկամանի, հանքաքարի, նստարանի, ավտոբուսների կայանավայրի կամ աղբամանի:

Ի՞նչ կպատահի, եթե ես խախտեմ այս կանոնները:

Այս կանոնների և կարգերի խախտումը պատժելի է ոչ հանցավոր տուգանքի տեսքով՝ համաձայն Քաղաքի Վարչական Վկայակոչման Հարկադիր Կատարման (ACE), ըստ Լոս Անջելեսի Քաղաքային Օրենսգրքի 42.13D բաժնի: Կալիֆորնիայի SB 946 օրենքը չի սահմանափակում RAP-ին ընդունել կանոններ և կարգեր, որոնք արգելում են չարտոնագրված կամ արգելված առևտրային ծառայություններն այգիներում: Հանգստի և Այգիների Բաժինը պահպանում է իրավունքը ցանկացած պահի և ըստ

անհրաժեշտության բարելավել, փոխել կամ վերանայել այն կանոններից ցանկացածը տեղական և պետական օրենսդրությանը համապատասխան: